



1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԸՍՏ ՏԱՐԿԱ ԱՄԻՄՆԵՐԻ
3. ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՐԴՆԵՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Բնակչության շրջանում գնալով էլ ավելի է մեծանում հետաքրքրությունը գյուղմթերքների արտադրության նկատմամբ, հատկապես, առանց թունաքիմիկատների մթերքի արտադրությունն ու օգտագործումը: Այս ուղեցույցում ներկայացված են գյուղատնտեսական աշխատանքներն ըստ ամիսների և այն մասին, որ գյուղատնտեսական աշխատանքներն ամենօրյա են, չունեն ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ, և պետք չէ մտածել, որ դրանք սկսվում են միայն գարնանը: Աշխատանքներն սկսվում և ավարտվում են տարվա բոլոր եղանակներին և հնարավոր չէ ասել, թե երբ է սկսվում կամ ավարտվում: Գյուղմթերքների արտադրությունը մեծ աշխատանքներ է պահանջում, ինչպես նաև ջանասիրություն, նվիրում և սեր: Շատ երկրներում օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելիս մեծ ուշադրություն են դարձնում տարվա ամիսներին: Ինչպես բոլոր կենդանի օրգանիզմները, այնպես էլ հողը շնչում է, իսկ արտաշնչման ժամանակ ջրում լուծված հանքային աղեր և այլ սննդատարրեր

արմատներից հոսում են դեպի վերև: Այդ ընթացքում լավ զարգանում են վերգետնյա օրգանները՝ տերևներ, ծաղիկներ, պտուղներ, իսկ ներշնչման ժամանակ՝ օրգանական նյութերն իջնում են ներքև, որի հետևանքով սկսվում է բույսի ստորգետնյա մասերի զարգացման շրջանը: Հայաստանը գտնվում է բնակլիմայական տարբեր գոտիներում՝ հարթավայրային, նախալեռնային և լեռնային, ուստի հողագործը գյուղաշխատանքներ կատարելիս պետք է հաշվի առնի թե որ ամիսն է ավելի բարենպաստ իր տարածքում շխատանքներ իրականացնելը: Ստորև ներկայացնում ենք, թե որ ամիսն ինչ աշխատանքներ պետք է իրականացվի, որպեսզի բարձրացվի մշակաբույսերի բերքատվությունը, ունենալ առողջ և առանց թունաքիմիկատների աճեցրած մրգեր ու բանջարեղեն:

ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐ



ԳԱՐՈՆ



ՄԱՐՏ

ԱՊՐԻԼ

ՄԱՅԻՍ

ՀՈՆԻՍ

ՀՈՒԼԻՍ

ՕԳՈՍՏՈՍ

ԱՄԱՌ



ԱՇՈՒՆ



ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐ

ՁՄԵՌ



ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՀՈՒՆՎԱՐ

ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԸՍՏ ՏԱՐՎԱ ԱՄԻՄՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



ՀՈՒՆՎԱՐ

Բույսերը հիվանդություններից և վնասատուներից պաշտպանելու համար ամենալավ շրջանն է: Արմատների և արմատապտուղների հետ կապված ցանկացած միջոցառում արդյունավետ կլինի: Հունվարին խորհուրդ է տրվում հաճախակի ստուգել պահեստավորված պտուղները, անցկացնել կանխարգելիչ միջոցառումներ: Կարելի է զբաղվել ապագա տնկարկների պլանավորմամբ, ձեռք բերել սերմեր, պարարտանյութեր, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող անհրաժեշտ միջոցներ, գյուղատնտեսական գործիքներ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Մենյակային բույսերի և ծաղիկների ջրում
- Մենյակային բույսերի և ծաղիկների հողի փխրեցում

- Ձմռանը պահվող արմատապտուղների, պալարների վիճակի ստուգում և օդափոխում
- Ջերմասեր բազմամյա բույսերի ձնածածկում, պտղատու ծառերի պաշտպանում ցրտահարությունից
- Խաղողի վազի բարձրացման համար հենքի կառուցում և ցանկապատի տեղադրում
- Ցրտից և կրծողներից մշակաբույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ
- Ձմեռային պատվաստի կատարում
- Եթե չեք հասցրել աշնանը հավաքել վնասատուների բները, ապա կատարեք հունվար ամսին
- Տաքացվող գրունտում կատարել էտ, շվատում
- Բակը մաքրել ձյան ծածկույթից և կուտակել ծառերի բների շուրջ
- Սերմերի գնում և տեսակավորում:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒԴՆԵՐ



- Միջին, խոշոր և շատ խոշոր սերմերը ցանել առանձին-առանձին
- Բավականին լավ սերմացու ընտրելու համար վարունգի, դոմիկի, դդումի, ձմերուկի սերմերն ընկղմել 5%-ոց, իսկ բակլազգիների սերմերը /սիսեռ, լոբի, ոլոռ, ոսպ/՝ 10%-ոց աղաջրի մեջ: Ցանքի համար ընտրել այն սերմերը, որոնք մնացել են տարայի հատակին: Ջրի մակերեսին լողացող սերմերը պիտանի չեն ցանքի համար
- Սերմերը անհրաժեշտ է պատել սննդարար նյութերով. վերցնել 3լ ջուր, ավելացնել 1բաժակ փայտի մոխիր, 1բաժակ թարմ գոմաղբ և լավ խառնել, որից հետո սերմերը 2-4 ժամ պահել այդ լուծույթի մեջ /փոքրերը՝ 2 ժամ, մեծերը՝ 4-5 ժամ/, այնուհետև փռել չորանալու, որից հետո կատարել ցանք:

ՓԵՏՐՎԱՐ

Փետրվարին ստեղծագործ աշխատանքով զբաղվելու ժամանակն է՝ լինի դա սելեկցիա, թե ծաղկանոցի, բանջարանոցի կամ այգու նախագծում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Սենյակային բույսերի և ծաղիկների տնկում, տեղափոխում, ծաղկամաններում հողի փխրեցում
- Ոռոգման աշխատանքների իրականացում
- Ձմռանը պահվող արմատապտուղների, պալարների ու պալարասոխուկավորների ստուգում և օդափոխում
- Հանքային պարարտանյութերով հողի սնուցում
- Օրգանական պարարտանյութերով հողի սնուցում
- Քաղհան, էտ, նոսրացում, շվատում տաքացվող գրունտում
- Պտղատու ծառերի և սենյակային լիմոնի պատվաստում
- Ծառերի բների և կմախքային ճյուղերի սպիտակեցում
- Թաղած տնկիների վիճակի ստուգում
- Ցրտից և կրծողներից մշակաբույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ
- Ջերմոցների համար սերմերի, պարարտանյութերի, պոլիէթիլենային թաղանթի և բաց դաշտի համար տնկանյութի ձեռք բերում
- Մեղմ կլիմա ունեցող տարածքներում հողային աշխատանքների սկսում, հողամասի ձևափոխում, տնկիների նախապատրաստում տնկման համար
- Ծխակույտի պատրաստում՝ այգին ցրտահարություններից պաշտպանելու համար
- Տաք օրերին խաղողի վազի բարձրացման համար կարկասի կառուցում
- Ձնհալից հետո տարածքի փոցխում
- Հիվանդությունների և վնասատուների դեմ տարվող պայքարի իրականացում:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ջերմոցներում խորհուրդ է տրվում բույսերն աճեցնել հետևյալ բաղադրությամբ հողախառնուրդում՝ 3 մաս հող, 1 մաս ավազ, 1 մաս տորֆ, 1 մաս կենսահումուս:

ՄԱՐՏ

Այս շրջանում բույսերի հետ աշխատելիս պետք է շատ զգույշ լինել, բույսերը հեշտությամբ վնասվում են և վնասվելուց հետո դժվար վերականգնվում: Հնարավոր է վնասատուների, տարբեր սնկերի և բորբոսի առաջացում: Պետք չէ չարաշահել բույսերի ջրումն ու պարարտացումը: Այս ժամանակահատվածում բավականի լավ աճում են սենյակային բույսերը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Մենյակային բույսերի և ծաղիկների տնկում, տեղափոխում, ծաղկամաններում հողի փխրեցում
- Պտղատու ծառերի և հատապտուղների էտի և ձևավորման աշխատանքների շարունակում ու ավարտում, այգուց էտած շիվերի ու ճյուղերի հեռացում
- Անհրաժեշտության դեպքում կրկնել ծառերի բների և բազմամյա ճյուղերի հիմքերի սպիտակեցումը
- Այգու և բանջարանոցի տարածքի փորում



- Եթե տվյալ վայրում գարունը շուտ է բացվում, հարկավոր է մարտի կեսերից բացել խաղողի վազերը, կատարել էտ, որից անմիջապես հետո չոր կապ
- Ոռոգման աշխատանքների իրականացում
- Հանքային պարարտանյութերով հողի սնուցում
- Օրգանական պարարտանյութերով հողի սնուցում
- Մտուզել և բուժել ցրտերի և վնասատուների հետևանքով առաջացած ծառերի վնասվածքները
- Պտղատու ծառերի պատվաստում
- Բույսերի լվացում, ցողում, տերևային սնուցում
- Պայքար վնասատուների և մոլախոտերի դեմ
- Թփերի և կանաչ ցանկապատերի էտ:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Միջատների դեմ պայքարի առաջին պայմանն առողջ հողում առողջ բույսերի աճեցումն է: Միջատները վնասում են հիվանդ բույսը: Իսկ մշակության ճիշտ կազմակերպումը թույլ կտա խուսափել միջատներից և այլ հիվանդություններից
- Հարկավոր է օգտագործել տվյալ վայրի համար այնպիսի բույսեր, որոնք այդ տարածքի բնակլիմայական պայմաններին կկարողանան դիմակայել
- Հարկավոր է աճեցնել անբերնպաստ պայմաններին դիմակայող, միջատների և հիվանդությունների հանդեպ դիմացկուն մշակաբույսեր
- Հարկավոր է խուսափել նոր, անհայտ տեսակներ,



հատկապես հիբրիդներ աճեցնելուց, քանի որ որոշ հիբրիդներ հողի սննդարար նյութերը կլանում են ավելի արագ, քան կարող են ստեղծել հողում եղած մանրէները

- Հարկավոր է ուշադրություն դարձնել, որ նույն ընտանիքի և սննդանյութերի նկատմամբ միևնույն պահանջ ունեցող բույսերը կողք կողքի չլինեն
- Խորհուրդ չի տրվում ամեն տարի նույն մարզում ցանել նույն կամ նույն ընտանիքին պատկանող մշակաբույս, նման դեպքերում հավանական է, որ առաջանան մի շարք հիվանդություններ
- Մեծ քանակությամբ սննդարար նյութեր պահանջող բույսերից հետո հարկավոր է տնկել հողին սննդարար նյութեր տվող բույսեր: Արմատապտուղներից հետո կարելի է ցանել բակլազգիներ:

ԱՊՐԻԼ

Ապրիլ ամսին հողն ու բույսն արթնանում են քնից, անմիջապես կլանում արևի լույսն ու ջերմությունը: Ժամանակն է կարգի բերել այգին ու բանջարանոցը, հավաքել բուսական մնացորդները, բույսերը հիվանդություններից ու վնասատուներից պաշտպանելու միջոցառումներ կազմակերպել: Եթե տաք օրվա վերջում ջերմաստիճանը միանգամից իջնում է, գիշերը՝ ցրտում, քամի չի լինում, երկինքն անամպ է, խոտերի վրա ցող չի նկատվում, ուրեմն հնարավոր է ցրտահարություն և հարկավոր է կազմակերպել ցրտահարության դեմ միջոցառումներ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Մենյակային բույսերի, ծաղիկների տնկում, տեղափոխում, հողի փխրեցում, բանջարաբուստանային մշակաբույսերի ցանք, սածիլում
- Ոռոգման աշխատանքների իրականացում
- Անհրաժեշտության դեպքում հանքային պարարտանյութերով հողի սնուցում
- Անհրաժեշտության դեպքում օրգանական պարարտանյութերով հողի սնուցում
- Ավարտել պտղատու և հատապտղային մշակաբույսերի նոսրացման, էտի և ձևավորման աշխատանքները
- Ապրիլի առաջին տասնօրյակում ավարտել խաղողի վազերի էտը
- Վազերի չոր կապն ավարտել մինչև աչքերի ուռչելը
- Բազմացման նպատակով կատարել հատապտուղների և պտղատու ծառերի անդայիս /բազմամյա բույսերի վեգետատիվ բազմացման ձև/
- Գարնանային ցրտահարությունից խուսափելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ



- Կատարել ծառերի ցրտահարված, սևացած և չորացած ընձյուղների հեռացում: Եթե որոշ ծառեր, թփեր չորացել են կամ պետքական չեն, անհրաժեշտ է արմատախիլ անել և փոխարենը տնկել նորը
- Այգու տարածքում տեղադրել մեղվաբնակարաններ
- 2-3 շաբաթը մեկ փխրեցնել պտղատու ծառերի և հատապտղային թփերի միջբուսային տարածությունները
- Պայքարել վնասատուների, հիվանդությունների և մոլախոտային բուսականության դեմ
- Կատարել սանիտարական էտ և լրացուցիչ պարարտացում:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Անհրաժեշտ է նախապատրաստել հողը, ազատվել վնասատուներից և մոլախոտերից, կատարել պարարտացման աշխատանքներ
- Գոմաղբը հիմնականում օգտագործվում է որպես օրգանական պարարտանյութ բույսերի սնուցման համար, ուստի պետք է առանձին հավաքել և պահել հորերում: Հորի հատակն ու պատերը պատրաստում են ոչ ջրաթափանց նյութից: Հորի բերանն ամուր փակում են, որպեսզի ազոտի կորուստ տեղի չունենա
- Տորֆը՝ որպես պարարտանյութ, օգտագործում են ինչպես առանձին, այնպես էլ տարբեր օրգանական նյութերի հետ
- Կան բույսեր, որ կարելի է կողք կողքի ցանել, տարբեր բույսեր կարող են ինչպես օգուտ տալ մեկը մյուսին, այնպես էլ՝ վնասել: Իրար մոտ լավ աճում են վաղահաս կաղամբն ու լոլիկը, ուշահաս կաղամբն ու վաղահաս կարտոֆիլը, լոլիկն ու նեխուրը, լոբին ու կարտոֆիլը, գազարն ու սալաթները, դդմիկն ու եգիպտացորենը, վարունգն ու արևածաղիկը, ռեհանն ու պոմիդորը, սխտորն ու բազուկը, մաղադանոսն ու լոլիկը, բազուկն ու սոխը, սոյան և ցանկացած մշակաբույս
- Փոքրացնել ծառի սաղարթի չափերը, ծառի բարձրությունը սահմանափակել 2,5-2,8 մետր սահմաններում: Սաղարթը պետք է մոտեցնել հողի մակերևույթին:



ՄԱՅԻՍ

Այս ժամանակաշրջանում հողը ջանասիրաբար մանրակրկիտ մշակում են, փորում, փխրեցնում, մաքրում մոլախոտերից, հողը հարստացնում հանքային և օրգանական

պարատանյութերով: Մայիս ամսին լավ զարգանում են բոլոր տեսակի բույսերը, քանջարեղենային պտուղներն ամուր են և գեղեցիկ, ծաղիկները վառ են ու փարթամ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Բանջարանոցային բույսերի սածիլում և խնամք /փխրեցում, մուլախոտերի քաղհան և հեռացում/
- Այն ծառերը, որոնք ծանրաբեռնված են առատ բերքով, նախօրոք հենակավորել և լավ ջրել, հեռացնել ծառին մոտ տերևները
- Կազմակերպել պայքար վնասատուների և մուլախոտերի դեմ
- Պատրաստել ծխակույտեր ցրտահարության դեմ, հողը փխրեցնել և առատ ջրել
- Ստուգել նախօրոք կատարված պատվաստների վիճակը, այն բողբոջները, որոնք դեռ չեն կպել՝ կատարել ճյուղերի վերապատվաստում
- Շարունակել խաղողի վազի տնկման և վերանորոգման աշխատանքները
- Կարելի է մայիսի սկզբից սկսել խաղողի վազի կանաչ պատվաստումը
- Հողը փխրեցնել և առատ ջրել, հաջորդ ջուրը տալ միայն 15 օր հետո, և ջրելուց հետո հողը փխրեցնել
- Հանքային պարարտանյութերով հողի սնուցում
- Օրգանական պարարտանյութերով հողի սնուցում
- Կատարել բույսերի լվացում, ցողում, տերևային սնուցում
- Մայիսին պետք է սկսել հատապտուղների հավաքումը, որից հետո հողը պարարտացնել և կատարել պայքարի միջոցառումներ վնասատուների և հիվանդությունների դեմ
- Սկսել տերևաբանջարների և կանաչեղենի բերքահավաքը, որից հետո ջրել հողը և սնուցել:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- **Թռչնաղբ** – բարձրարժեք օրգանական պարարտանյութ է: Ըստ հաշվարկների, տարեկան մեկ հավից միջին հաշվով հարելի է ստանալ 5-6, բադից՝ 8-9, սագից՝ 10-11կգ չոր թռչնաղբ: Հատիկով սնվող թռչունների թռչնաղբի մեջ ավելի մեծ քանակությամբ ազոտ և ֆոսֆոր կա, քան խոտով սնվող թռչունների: Բույսերի լրացուցիչ սնուցման համար կարելի է օգտագործել թռչնաղբ: Ֆոսֆորի, ազոտի և կալիումի մեծ քանակության պարունակությունը թռչնաղբի մեջ կապված է թռչնի կերի քանակից և որակից:



- **Մոխիր** – մոխիրը կալիում-ֆոսֆոր-կրային միացությունների պարարտանյութ է: Առանձին տնտեսությունում յուրաքանչյուր վառարանից կամ թոնրից ստացվում է մոտ 5 տոննա մոխիր: Մոխիրը նույնպես համարվում է հողի համար լիարժեք պարարտանյութ:



- **Մեղուների ասկայություն** – մեղուներն հողամասում պտուղների բերքն ավելացնում է շուրջ 40%-ով: Մեղուներին թունավորումից պաշտպանելու համար անհրաժեշտ է պեստիցիդներ օգտագործել առավել ցածր կամ երեկոյան ժամերին, երբ մեղուների թռիչք չկա: Նրանց դերն ու նշանակությունը շատ է կարևորվում բնության մեջ:



ՀՈՆԻՍ

Հունիս ամսին պետք է զբաղվել բազմացման աշխատանքներով: Կարելի է զբաղվել դեղաբույսեր հավաքելով, ինչպես նաև կատարել պարտեզային բույսերի պարարտացման աշխատանքներ: Անհրաժեշտ է զբաղվել հողի փխրեցմամբ և քաղհանով՝ հեռացնելով ձեր և հիվանդ բույսերը: Այս ժամանահատվածում խորհուրդ է տրվում զբաղվել դեղաբույսերի, խոտաբույսերի և կանաչեղենի չորացմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Մշակաբույսերի և ծաղիկների ցանք և սածիլում, տեղափոխում, հողի փխրեցում
- Մածիլների և սենյակային բույսերի պարարտացում հանքային պարարտանյութերով
- Մածիլների և սենյակային բույսերի պարարտացում օրգանական պարարտանյութերով
- Մանիտարական էտ
- Պտղատու ծառերի պատվաստում
- Ծաղկման շրջանում խաղողի վազի շիվերի ձերատում
- Ամսվա կեսերին ավարտին հասցնել խաղողի վազի կանաչ պատվաստումը
- Կատարել ոռոգման աշխատանքներ
- Իրականացնել բույսերի լվացման աշխատանքներ, ինչպես նաև ցողում և տերևային սնուցում միկրոէլեմենտներով
- Կրծողների, ծառերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտային բուսականության դեմ պայքարի միջոցառումներ
- Թփերի և ծառերի էտ, լրացուցիչ պարարտացում



- Տերևաբանջարների և կանաչեղենի բերքահավաք:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Գորտերը, դողոշներն ու չղջիկները համարվում են այգու պահապանները: Չղջիկները մեկ գիշերում ուտում են իրենց քաշի չափով միջատներ: Դողոշն օրական ուտում է մոտ 100 տարբեր վնասատուներ, այդ իսկ պատճառով ցանկալի է բարենպաստ պայմաններ ստեղծել գորտերի, դողոշների և մողեսների համար: Օրինակ՝ փոքրիկ արհեսական լճակ ստեղծել և կոճղերի քանակը շատացնել



- Զատիկն օրգանական գյուղատնտեսության խորհրդանիշն է համարվում: Այն օրական ուտում է 40-50 միջատ: Զատիկը սնվում է վնասատու միջատներով, իսկ այն միջատները, որոնք օգուտ են տալիս բույսերին, դրանցով չի սնվում



- Ճնճղուկազգիներն օրական որսում են 5000-6000 սարդ և թրթուր, փայտփորիկը՝ 5000-6000 մրջյուն



- Պտղատու ծառերի պտղաբերությունն արագացնելու համար հունիսին էտում են ծառերի դալար ընձյուղները: Իսկ եթե էտ կատարելու աշխատանքներն ուշացրել եք, ավելի լավ է ընդհանրապես հրաժարվել դրանից



- Հատապտուղներն հավաքում են ցողը չորանալուց հետո: Հաղարջը հավաքում են լրիվ հասունացման փուլում, ազնվամորին՝ երբ պտուղը պոկվում է առանց պտղակոթունի:



ՀՈՒԼԻՍ

Հուլիս ամսին լավ զարգանում են տերևաբանջարներն ու քաղցրահամ պտուղները: Պետք է հետևել տերևներին, որ լինեն մաքուր և առողջ, իսկ լույսն ու ջուրը անհրաժեշտ է, որ հասնեն բույսերին: Բերքը սովորաբար առատ է լինում: Արդյունավետ ժամանակաշրջան է բույսերի տնկման և պարարտացման համար: Հիանալի աճում են վարդերը, քաջվարդերը, նարգիզները և դեղաբույսերը: Հարկավոր է հաճախակի օդափոխել ջերմոցներն ու պահեսները:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Մշակաբույսերի խնամք՝ հողի փխրեցում, մուլախոտերի դեմ պայքար
- Ոռոգման աշխատանքներ
- Բանջարանոցային բույսերի, պտղատու այգիների և ծաղիկների լրացուցիչ պարարտացում հանքային պարարտանյութերով
- Բանջարանոցային բույսերի, պտղատու այգիների և ծաղիկների լրացուցիչ պարարտացում օրգանական պարարտանյութերով
- Սանիտարական էտ
- Հուլիսի վերջին տասնօրյակում սկսել խաղողի վազի շիվերի կարճացման աշխատանքներ
- Պտղատու ծառերի պատվաստում
- Բույսերի լվացում, ցողում, տերևային սնուցում միկրոտարրերով
- Կրծողների, մուլախոտերի, հիվանդությունների և վնասատուների դեմ տարվող պայքար
- Սանիտարական էտ, լրացուցիչ պարարտացում:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Ոստայնատզով վարակված բույսերի սրսկում
- Լվիճների, թիթեռների, բզեզների, սղոցողների երիտասարդ թրթուրների դեմ կիրառել համապատասխան սրսկումներ



- Բույսերը հավաքել ծաղկման շրջանում, չորացնել ստվերում:

ՕԳՈՍՏՈՍ

Այս ընթացքում խորհուրդ է տրվում զբաղվել պտուղներ, դեղաբույսեր և կանաչեղեն չորացնելով: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել վնասատուների դեմ պայքարին: Կատարել հողի մշակության աշխատանքներ՝ փխրեցում, ցանքաձածկ, մոլախոտերի հեռացում: Անհրաժեշտ է ջրել այգին ու բանջարանոցը, քանի որ ամենաչոր ամիսը համարվում է օգոստոսը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Ծաղիկների, պտղատու այգիների և բանջարանոցային մշակաբույսերի խնամք՝ հողի փխրեցման աշխատանքներ, մոլախոտերի դեմ պայքար
- Ոռոգման աշխատանքներ
- Լրացուցիչ պարարտացում հանքային պարատանյութերով
- Լրացուցիչ պարարտացում օրգանական պարատանյութերով
- Պտղատու ծառերի պատվաստ
- Շարունակել խաղողի վազերի կարճացման աշխատանքները
- Բույսերի լվացում, ցողում, տերևային սնուցում միկրոտարրերով
- Պայքարել վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ
- Հողի և տնկափոսերի նախապատրաստում՝ ծառերի և թփերի աշնանային տունկի համար
- Մանիտարակ էտ
- Բերքի հավաք
- Վարդերի էտ
- Հավաքել ծառի տակ թափված բերքը, ընտրել լավ վիճակում գտնվողները և պատրաստել մրգահյութ, քացախ, գինի
- Հավաքել ծառի վրայի պտուղները, իսկ ծառի տակից հնձել և հեռացնել խոտը
- Հողը նախապատրաստել աշնանային տնկումների համար:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Սդոցողների և լվիճների դեմ պայքար
- Թրթուռների և ծծողների վնասատուների դեմ պայքար

- Լվիճների, տերևալվիճների և տզերի դեմ պայքարի միջոցառումներ



- Մուլախոտերը մեծ վնաս են հասցնում բուսածածկույթին և անհրաժեշտ է ժամանակին պայքարել դրանց դեմ: Մշակովի բույսերին չվնասելու համար խորհուրդ է տրվում մուլախոտերի դեմ սրսկումը կատարել միջշարային տարածություններով:



ՄԵՊՏԵՄԲԵՐ

Այս շրջանում լավ են զարգանում ավագահող բույսերը: Արդյունավետ է վնասատուների դեմ պայքարը: Հավաքված բերքը երկար է պահպանվում, սերմերը բավականին որակյալ են: Եթե պտղակոթը հեշտությամբ է անջատվում ճյուղից, նշանակում է արդեն կարելի է բերքը հավաքել:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Ծաղիկների, պտղատու այգիների և բանջարանոցային մշակաբույսերի խնամքի աշխատանքներ
- Սրգատու ծառերի բաժակների նորոգում
- Աշնանացանի համար մարգերի նախապատրաստում, հողամասի մաքրում և աշնանային վար
- Պտղատու ծառերի պատվաստում
- Սանիտարական էտ
- Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար
- Արմատապտուղների, սոխուկավոր և պալարասոխուկավոր բույսերի բերքահավաք
- Հանքային և օրգանական նյութերով պարարտացում
- Հատապտուղների մշակում
- Երկարատև պահպանման համար նախատեսված բերքի հավաք
- Պտղահավաքից անմիջապես հետո ջրել պտղատու ծառերն ու հատապտղային թփերը



- Հավաքել տերևները, ճյուղերը, չոր խոտը, գետնին թափված ոչ պիտանի պտուղները
- Ծաղկամանների մեջ տեղադրված կանաչեղենի տեղափոխում՝ ձմռանը լուսամուտագոգին աճեցնելու համար:



- Բանջարանոցային մշակաբույսերի և ծաղիկների սերմերի հավաքում:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Պտղատու և հատապտղատու բույսերը հաջորդ տարում նախապատրաստելու համար սեպտեմբերին կտրում են աճող շիվերի ծայրերը
- Պայքար մկների դեմ
- Պայքար առնետների դեմ: Կարելի է պայքարել հետևյալ խառնուրդի օգտագործմամբ - 500գ գիպս, 200գ այլուր
- Հաղարջենու, կոկոռչենու, ազնվամորու և այլ հատապտուղների հիվանդությունների դեմ կարելի է պայքարել կալիումացված սոդայով
- Կերակրի աղի կամ կերակրի սոդայի ջրային լուծույթով կարելի է պաշտպանել պոմիդորի և կարտոֆիլի բույսերը ֆիտոֆլորայով վարակվելուց:




ՀՈԿՏԵՄԲԵՐ

Այս ժամանակաշրջանը բերքահավաքի և հավաքված բերքի պահեստավորման լավագույն շրջանն է: Այս ամսում հավաքված բերքը երկար է պահպանվում և կարողանում է դիմադրել բոլոր հիվանդություններին ու վնասատուներին: Սելեկցիոն աշխատանքների համար լիարժեք ժամանակաշրջան է:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Ծաղիկների, պտղատու այգիների և բանջարանոցային մշակաբույսերի խնամքի աշխատանքներ
- Կատարել բերքահավաք, հողամասի մաքրում և աշնանային վար
- Ծաղիկների, բանջարեղենի և պտղատու ծառերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտային բուսականության դեմ պայքար: Քաղցկեղով վարակված խաղողի վազերը արմատախիլ անել և այրել
- Պտղատու ծառերի պատվաստում

- Խաղողի վազերը ձմռան ցրտից պաշտպանելու համար սկսել նախապատրաստական աշխատանքներ
- Թաղվող վազերը ձմռան ցրտից պաշտպանելու համար կտրել ավելորդ ճյուղավորումները և թաղել հողում
- Հանքային պարատանյութերով պարարտացում
- Օրգանական պարարտանյութերով պարարտացում
- Արմատապտուղերի, սոխուկավոր և պալարասոխուկավոր բույսերի բերքահավաք: Բերքահավաքի ավարտ, մրգատու ծառերի բաժակների նորոգում
- Ծաղկամանների մեջ տեղակայված կանաչեղենային մշակաբույսերի տեղափոխում՝ ձմռանը լուսամուտագոգին աճեցնելու համար
- Մշակաբույսերի և ծաղիկների սերմերի հավաքում
- Հողի նախապատրաստման աշխատանքներ գարնանային սաժիլների համար
- Աշնանավերջի խոր ջուր
- Բազմամյան բույսերի ծածկում՝ ցրտահարությունից պաշտպանելու համար, ջերմասեր ծառերի բների նորոգում և փաթաթում
- Նախապատրաստել հողատարածքը աշնանացանին



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Հոկտեմբերի 1-ից մինչև 25-ը սխտոր տնկելու շրջանն է: Ցրտերը սկսվելուց 2-3 շաբաթ առաջ սխտորի ատամիկները պետք է արմատավորվեն, բայց չծլեն: Ավելի ուշ տնկելը վտանգավոր է, քանի որ սխտորը կարող է ցրտահարվել: Տնկում են 5-6սմ խորությամբ, հեռավորությունը 8-10սմ, իսկ շարքերի միջև եղած հեռավորությունը 30-40սմ: Եթե հողը չոր է, ապա հարկավոր է առատորեն ջրել: Այն հողատարածքում, որտեղ կարտոֆիլ է տնկվել, չի կարելի սխտոր աճեցնել, այն վարակվում է ֆուզարիոզով: Սխտորը լավ է աճում սիսեռից, լոբուց, վաղահաս կաղամբից, դդմիկից և դդումից հետո
- Երբ սխտորի պճեղներեն արդեն հասունացել են, իսկ տերևները սկսել են դեղնել ու պառկել, պետք է սկսել բերքահավաքը: Լրիվ հասունացումը տեղի կունենա հետբերքահավաքային ժամանակաշրջանում:



ՆՈՅԵՄԲԵՐ

Պետք է մեծ ուշադրություն դարձնել բերքի պահեստավորման ժամանակ: Մեծ է բերքի փչանալու հավանականությունը: Բույսերը հարկավոր չէ շատ ջրել: Ամսվա սկզբին բույսերի վերգետնյա մասերի հետ աշխատելու ամենաարդյունավետ ժամանակաշրջանն է: Նոյեմբերի երկրորդ կեսերին բարենպաստ ժամանակաշրջան է բազմամյա և սոխուկավոր բույսերի համար: Լավ ժամանակահատված է բերքը երկարատև պահեստավորման նախապատրաստվելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Այն տարածքները, որտեղ կատարվել է բերքահավաք անհրաժեշտ է մաքրման աշխատանքներ՝ չոր և վնասված ճյուղերը, հիվանդ բույսերը հեռացնել, մրգատու ծառերի բաժակները նորոգել
- Հողամասի փորում, ծառերի բնամերձ շրջանների փխրեցում
- Մենյակային բույսերի, ջերմոցային բույսերի, պտղատու ծառերի հիվանդությունների դեմ պայքար, ինչպես նաև պայքար տանել վնասատուների և մոլախոտային բուսականության դեմ
- Մրգատու ծառերի պատվաստացու ճյուղերի նախապատրաստում՝ ձմեռային պատվաստման համար
- Բազմամյա խոտաբույսերի աշնանավերջի խոր ջուր
- Լրացուցիչ պարատացում հանքային և օրգանական պարարտանյութերով
- Աշնանացան մշակաբույսերի վերջին ցանք
- Արմատապտուղների և սոխուկավոր, պալարավոր բերքի պահեստավորում
- Հատապտուղների վերամշակում
- Բազմամյա պարտեզային բույսերի ծածկում՝ ցրտահարությունից պաշտպանելու համար
- Խաղողի վազի չթափվող շրջաններում կատարել պարարտացում և հողի փխրեցում
- Աշնանը հավաքած սերմերի տեսակավորում և պահեստավորում:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- **Կոլորադոյան բզեզի** դեմ պայքարում են հետևյալ կերպ. հավաքում են 1 բաժակ հասուն բզեզ, լցնում 10լ եռացրած ջրի մեջ և թողնում, որ սառչի: Այնուհետև սրսկում են բույսերը: Մի քանի անգամ սրսկելուց հետո, բզեզները իրենց իսկ հոտից հեռու կփախնեն



- **Միզանյութ** կարելի է օգտագործել որպես սնկասպան նյութ՝ քոս հիվանդության դեմ: Միզանյութի ջրային լուծույթն օգտագործում են ծառերի բնամերձ տարածքները ոռոգելու միջոցով



- **Մոխիրն** արդյունավետ միջոց է վնասատուների դեմ: Արդյունավետ է փայտի և ծղոտի մոխիրը



- **Ցեմենտը** խորհուրդ է տրվում օգտագործել կողինջների դեմ: Վերջինս կատարվում է վաղ առավոտյան՝ պաշտպանվող բույսերի միջջարային տարածությունները ցեմենտով փոշոտելու եղանակով



- **Լվիճների** դեմ կարելի է պայքարել հոտած ջրով: Որպեսզի ջուրն արագ հոտի, կարելի է ավելացնել մի քիչ մսաջուր



- **Հանգած կիրք**, մոխիրն ու գոմաղբը հավասար քանակությամբ բացել ջրի մեջ և ստանալ թանձր նյութ, լցնել ծառերի բաժակներին և քսել բներին, այս նյութի առկայության դեպքում մկները, առնետներն ու նապաստակները չեն վնասի ծառարմատները:



ԴԵԿՏԵՄԲԵՐ

Կլիմայական պայմաններից ելնելով, դեկտեմբերին արդեն բերքահավաքի աշխատանքներն ավարտված են և անհրաժեշտ է զբաղվել ձմեռային պաշարների նախապատրաստմամբ: Անհրաժեշտ է ստուգել հավաքված բերքի պահպանման վիճակը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Հողի փխրեցում ծաղկամաններում, չորացած տերևների և ծաղիկների հեռացում
- Պահեստավորված պալարների և պալարասոխուկների ստուգում և օդափոխում
- Ծառերի վրայից վնասատուների բների հեռացում
- Միամյա և բազմամյա խոտաբույսերի և մշակաբույսերի սերմերի և սոխուկների ձեռքբերում
- Այգեգործական գործիքների, տարրաների, պարարտանյութերի և պայքարի միջոցների ձեռքբերում, անսարք գործիքների վերանորոգում
- Եթե աշնանը չեք հասցրել հողը նախապատրաստել զարնանացանի համար, ապա այն մաքրել, շաղ տալ օրգանական պարարտանյութեր, որից հետո փորել և տեղաձևել
- Կատարել չթափվող վազերի նախնական կամ վերջնական էտ
- Հողը պարարտացնել
- Առատորել ջրել
- Պտղատու ծառերի պատվաստում
- Բանջարանոցային, պտղատու այգիների և ծաղկանոցների լրացուցիչ պարարտացում հանքային պարարտանյութերով
- Բանջարանոցային, պտղատու այգիների և ծաղկանոցների լրացուցիչ պարարտացում օրգանական պարարտանյութերով
- Ծաղկամանների մեջ կանաչեղենի և բանջարեղենի սածիլների տնկում
- Աշնանը հավաքված սերմերի տեսակավորում և պահեստավորում:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- **Բորոդյան հեղուկը** պտղատու և հատապտղատու մշակաբույսերի վրա օգտագործում են մինչև բողբոջների ուռչելը
- **Բուրգունդյան խառնուրդն** օգտագործում են ինչպես բորոդյան հեղուկը
- **Յողն** օգտագործվում է «մոխրագույն փտում» հիվանդության դեմ

- *Կայիումի պերմանգանատն* օգտագործվում է ալրացողային հիվանդությունների դեմ
- *Պղնձարջասպանն* օգտագործվում է ծառերի վերքերը 2-3%-ոց լուծույթով ախտահանելու նպատակով: Օգտագործվում է վնասատուների և հիվանդությունների դեմ
- *Հանքայուղային էմուլսիան* օգտագործվում է պտղատու և հատապտղային մշակաբույսերի հանգստի փուլում վնասատուների ձմեռող տեսակների՝ վահանակրի, տզերի, թրիպսների, սպիտակաթև, փոքր հասակի թրթուրների դեմ:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):